CENTER FOR LEGAL INITIATIVES
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության դիրքորոշումը դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու գնահատման նոր չափորոշիչների վերաբերյալ

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը ողջունում է դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու գնահատման նոր չափորոշիչների ներդրումը: Կազմակերպության գնահատմամբ՝ առաջարկվող չափորոշիչները նախորդ հայեցակարգով նախատեսված գնահատման չափորոշիչների համեմատությամբ ավելի մարդակենտրոն են և առավելապես ուղղված են դատապարտյալի դրական դինամիկայի, վերասոցիալականացման հնարավորությունների և հասարակության մեջ վերաինտեգրվելու պատրաստակամության համակողմանի գնահատմանը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական կերպով գնահատել դատապարտյալի վարքագիծը, սոցիալական կապերը, փոփոխության դինամիկան և հետագա զարգացման հեռանկարները՝ նպաստելով պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի ավելի արդար, հավասարակշռված և վերականգնողական արդարադատության սկզբունքներին համահունչ իրականացմանը:

Այս համատեքստում Կազմակերպությունը նաև ուրախությամբ արձանագրում է, որ նախորդ չափորոշիչների վերաբերյալ իր կողմից ներկայացված առաջարկությունները և բարձրացված հիմնական մտահոգությունները դիտարկվել են և էականորեն նկատի են առնվել նոր մոտեցումների մշակման ընթացքում[1]: Սա կարևոր քայլ է պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև կառուցողական համագործակցության զարգացման տեսանկյունից և կարող է նպաստել պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի արդյունավետությանը: Միևնույն ժամանակ Կազմակերպությունն առաջարկվող չափորոշիչների վերաբերյալ ունի մի շարք դիտարկումներ և առաջարկություններ, որոնք ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարության դիտարկմանը՝ ակնկալելով, որ դրանք կքննարկվեն և հնարավորության դեպքում հաշվի կառնվեն հետագա գործընթացներում:

1. **Պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին մասնակցելը**

Պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին մասնակցելը դատապարտյալի վերասոցիալականացման կարևոր բաղադրիչներից մեկն է, որը նպաստում է նրա գիտելիքների, հմտությունների և ինքնազարգացման հնարավորությունների ընդլայնմանը: Սակայն Կազմակերպության գնահատմամբ՝ գործնականում կարող են որոշ դժվարություններ առաջանալ կրթական ծրագրերին դատապարտյալի մասնակցությունը գնահատող չափորոշչով նախատեսված առավելագույն միավորի տրամադրման հարցում: Մասնավորապես, հնարավոր է, որ տվյալ քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ ծավալով կրթական ծրագրեր հասանելի չլինեն կամ դրանց հասանելիությունը սահմանափակված լինի դատապարտյալի պատժի կրման պայմաններով, օրինակ՝ անվտանգության գոտիների առանձնահատկություններով: Մեկ այլ խնդիր է այն, որ դատապարտյալի հետ աշխատող մասնագիտական խմբերը կարող է բավարար իրազեկման և մոտիվացիոն աշխատանքներ չկատարեն դատապարտյալի մեջ կրթության նկատմամբ դրական վերաբերմունք և մասնակցության պատրաստակամություն ձևավորելու ուղղությամբ: Հետևաբար այս չափորոշչով գնահատման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք գործնականում առավելագույն ջանքեր ներդնել՝ ապահովելու համար անհրաժեշտ ծավալով կրթական ծրագրերի հասանելիությունը բոլոր քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև ուժեղացնել դատապարտյալի հետ իրականացվող իրազեկման և մոտիվացիոն աշխատանքները՝ կրթական ծրագրերին հնարավորինս ակտիվ և իմաստալից մասնակցությունը խրախուսելու նպատակով: Նշված քայլերը կարևոր նախապայմաններ են, որպեսզի կրթական ծրագրերին մասնակցությունը դառնա

[1]«Պայմանական վաղաժամկետ ազատման հայեցակարգը հետնահանջ է վերասոցիալականացման քաղաքականությունից», հղում՝ https://prisoninitiatives.am/wp-content/uploads/2022/02/PV-hajecakarg_verjnakan.pdf:

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Կայք՝ www.prisoninitiatives.am
Հեռախոս՝ +374 55 155 300
Էլ.-հասցե՝ nare@prisoninitiatives.am

դատապարտյալի առօրյայի կարևոր բաղկացուցիչ մասը՝ նպաստելով հասարակություն վերադարձին և արդյունավետ վերասոցիալականացմանը:

2. **Պատժի կրման ընթացքում աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, և չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով**

Պատժի կրման ընթացքում դատապարտյալի աշխատանքը գնահատելու համար նախատեսված չափորոշիչն ընդհանուր առմամբ նպատակ ունի խրախուսել աշխատանքային ներգրավվածությունը, ինչը վերասոցիալականացման կարևոր գործոն է: Սակայն կարծում ենք, որ առկա են մի քանի հիմնական խնդրահարույց կետեր: Նախ, առնվազն երկու ամիս աշխատելը չափազանց փոքր շեմ է, քանի որ ժամանակահատվածը կարճ է և կարող է չարտացոլել աշխատանքի կայունությունը կամ շարունակականությունը: Հիմնական մտավախությունն այն է, որ, օրինակ, դատապարտյալը կարող է աշխատել ընդամենը երկու ամիս և ստանալ նույն միավորը, ինչ մեկը, ով աշխատել է, օրինակ, երկու տարի շարունակ: Միաժամանակ հարկ է նշել, որ չափորոշիչը գնահատում է միայն աշխատելու փաստը, սակայն լիարժեք չի արտացոլում դատապարտյալի մեջ աշխատանքի՝ որպես արժեհամակարգի ձևավորման գործընթացը: Այս հանգամանքը կարող է հանգեցնել նրան, որ տվյալ չափորոշչով կատարվող գնահատումը կրի առավելապես ձևական բնույթ և ամբողջությամբ չարտացոլի դատապարտյալի, այսպես ասած, աշխատանքային վարքագիծը: Բացի այդ, պետք է նկատի առնել, որ աշխատելը միշտ չէ, որ կարող է կախված լինել դատապարտյալից: Գործնականում հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ կամ շատ քրեակատարողական հիմնարկներում աշխատանքի տեղերը սահմանափակ են, կամ աշխատանքի հասանելիությունը սահմանափակ է որոշ դատապարտյալների համար՝ պայմանավորված նրանց պատժի կրման պայմաններով, օրինակ, անվտանգության գոտիների առանձնահատկություններով: Բացի այդ, հնարավոր են դեպքեր, երբ դատապարտյալը չի կարող աշխատել տարիքով, առողջական վիճակով կամ որևէ հաշմանդությամբ պայմանավորված: Այսինքն՝ նույնիսկ աշխատելու ցանկության դեպքում դատապարտյալը կարող է դրա իրական հնարավորությունը չունենալ, ինչը գնահատման գործընթացում կարող է հանգեցնել անհավասար կամ անարդար արդյունքների: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ աշխատանքը տվյալ պարագայում չպետք է սահմանափակվի միայն քրեակատարողական հիմնարկներում առկա հնարավորություններով: Ուստի կարծում ենք, որ այս չափորոշչով գնահատման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մի շարք գործնական քայլեր ձեռնարկել՝ այս չափորոշիչը վերասոցիալականացման ու հասարակության մեջ իրավահպատակ վարքագծի ձևավորման կայուն հիմք դարձնելու համար:

Այս համատեքստում նախ և առաջ անհրաժեշտ է չափորոշչում վերանայել աշխատելու նվազագույն ժամկետի շեմը և այն դարձնել ավելի ողջամիտ՝ ապահովելու համար, որ գնահատումն արտացոլի դատապարտյալի աշխատանքային ներգրավվածության կայունությունը: Նաև անհրաժեշտ է ընդլայնել աշխատանքի հնարավորությունները բոլոր քրեակատարողական հիմնարկներում և ապահովել, որպեսզի գործնականում մասնագիտական տարբեր խմբերի կողմից դատապարտյալների հետ իրականացվեն առավել ինտենսիվ աշխատանքներ՝ նրանց մեջ աշխատելու նկատմամբ դրական տրամադրվածություն և մոտիվացիա ձևավորելու նպատակով: Բացի այդ, անհրաժեշտ է ջանքեր ներդնել այլ գործատուների մոտ հեռավար ձևաչափով աշխատելու հնարավորություններն ընդլայնելու համար: Իսկ այն դեպքերում, երբ չաշխատելը պայմանավորված է դատապարտյալի տարիքով, առողջական վիճակով կամ որևէ հաշմանդությամբ, անհրաժեշտ է նրա հետ համապատասխան սոցիալ-վերականգնողական աշխատանքներ կատարել՝ մյուս չափորոշիչներով անհրաժեշտ միավորներ հավաքելուն նպաստելու և պայմանական վաղաժամկետ ազատման ժամանակ մրցունակ նախադրյալներ ձևավորելու համար: Նաև անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյո՞ք չվարձատրվող աշխատանքը տվյալ չափորոշչով գնահատելու հիմք է, թե՞՝ ոչ: Եթե այն չի նախատեսվում գնահատել տվյալ չափորոշչի շրջանակում, ապա կարևոր է ապահովել, որպեսզի չվարձատրվող աշխատանքը նույնպես արժանանա համապատասխան գնահատման՝ այն ներառելով այլ՝ առավել համապատասխան չափորոշչում: Սա

կարևոր է, որպեսզի դատապարտյալի աշխատանքային ակտիվությունը և ներգրավվածությունը՝ անկախ նրանից՝ դա կատարվում է վարձատրվող, թե չվարձատրվող հիմունքներով, լիարժեք ձևով արտացոլվեն դատապարտյալի վարքագծի գնահատման գործընթացում:

3. **Պատժի կրման ընթացքում սոցիալական կամ հոգեբանական կամ իրավական մասնագիտական աշխատանքների (խմբային կամ անհատական) կամ կրթական կամ մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը (զբաղվածություն)**

Պատժի կրման ընթացքում խմբային կամ անհատական ձևաչափով սոցիալական, հոգեբանական կամ իրավական մասնագիտական աշխատանքներին ներգրավվածությունը և մասնակցությունն առանձին չափորոշչով գնահատելը կարևոր նախադրյալ է, որպեսզի համապատասխան մասնագիտական աշխատանքները չմնան իրավական ամրագրումների մակարդակում, այլ ձևավորվի դրանք գործնականում կատարելու իրական պահանջ: Այս համատեքստում առաջարկում ենք գործնականում առավել ակտիվ ջանքեր ներդնել՝ քրեակատարողական հիմնարկներում համապատասխան մասնագիտական թափուր հաստիքները համալրելու, մասնագետների կարողություններն ու պատրաստվածությունը բարձրացնելու, ինչպես նաև իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների որակը շարունակաբար բարելավելու ուղղությամբ:

Նշված չափորոշչով գնահատմանը գործնականում կարող է խոչընդոտել նաև այն հանգամանքը, որ թեև ազատազրկված անձինք հաճախ իրենց հուզական վիճակը հաղթահարելու համար մասնագիտական աջակցության խորքային կարիք ունեն, սակայն մեծամասամբ խուսափում են իրենց խնդիրների մասին հոգեբանի հետ խոսելուց: Դա պայմանավորված է այն մտավախությամբ, որ ընդունելությունից կամ առանձնազրույցից հետո իրենք կարող են հաշվառվել որպես բացասական հակում ունեցող անձինք, ինչը հետագայում կարող է բացասաբար անդրադառնալ իրենց կարգավիճակի վրա կամ նույնիսկ դառնալ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու պատճառ: Իր կողմից իրականացված մի շարք ուսումնասիրությունների շրջանակում Կազմակերպությունը պարզել է, որ այս խնդրի հիմքում հաճախ ընկած են ՀՀ արդարադատության նախարարի թիվ 279-Ն հրամանով սահմանված կարգավորումները: Այդ կարգավորումների համաձայն՝ բացասական հակում ունեցող են համարվում այն ազատազրկված անձինք, ովքեր ունեն քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, այլ անձանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակումներ, ինչպես նաև այն դատապարտյալները, ովքեր ունեն հանցածին դիրքորոշումներ: Ազատազրկված անձինք հաշվառման են վերցվում որպես բացասական հակում ունեցող, եթե նրանց շրջանում առկա են փախուստի, ալկոհոլի կամ թմրամիջոցների օգտագործման, ագրեսիվության կամ կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների հակումներից որևէ մեկը: Հատկանշական է, որ նման հաշվառման հիմք կարող է հանդիսանալ նաև հոգեբանական եզրակացությունը: Հարկ է ընդգծել, որ քրեակատարողական հիմնարկներում առկա խնդիրները հաճախ կարող են առաջացնել ագրեսիվություն կամ կոնֆլիկտայնություն: Սակայն նման իրավիճակներում հոգեբանական աշխատանքի և աջակցության ուժեղացման փոխարեն անձինք կարող են հաշվառվել որպես բացասական հակում ունեցող, ինչը կարող է խոչընդոտել նրանց հետ վստահելի մասնագիտական աշխատանքի իրականացմանը: Կարծում ենք, որ անհրաժեշտ է ամբողջությամբ վերանայել Արդարադատության նախարարի թիվ 279-Ն հրամանով սահմանված «բացասական հակում» եզրույթը և դրա հիմքով անձանց հաշվառման վերցնելու գործող պրակտիկան՝ շեշտը դնելով մասնագիտական աջակցության ծրագրերի ընդլայնման և այն գործոնների աստիճանական նվազեցման վրա, որոնք կարող են ազատազրկված անձանց դրդել փախուստի, ալկոհոլի կամ թմրամիջոցների օգտագործման, ագրեսիվության կամ կոնֆլիկտայնության դրսևորումների: Այս համատեքստում հոգեբանները պետք է հնարավորինս զգայուն մոտեցում ցուցաբերեն ազատազրկված անձանց խնդիրները քննարկելիս՝ բացահայտելու համար նրանց իրական կարիքները, վարքագծի դրդապատճառները և հնարավոր ռիսկային գործոնները: Մասնագիտական միջամտությունը պետք է

ներառի հոգեբանական աջակցություն՝ ուղղված անձանց վիճակի բարելավմանը և հուզական կայունության վերականգնմանը: Հետևաբար կարևոր է, որ հոգեբանների նկատմամբ ձևավորվի բավարար վստահություն, որպեսզի ազատազրկված անձինք կարողանան անկաշկանդ կերպով խոսել իրենց խնդիրների և վարքագծի դրդապատճառների մասին՝ վստահ լինելով, որ կստանան անհրաժեշտ աջակցություն[2]:

Բացի այդ, ազատազրկված անձինք մտահոգություններ ունեն իրենց անձնական խնդիրների գաղտնիության ապահովման հետ կապված, ինչը հաճախ կաշկանդում է նրանց համապատասխան մասնագետների հետ անկաշկանդ խոսել իրենց հոգեկան վիճակի, ունեցած տագնապների կամ իրական մտահոգությունների մասին[3]: Գաղտնիության ապահովումը հոգեբանական աշխատանքի հիմնարար սկզբունքներից է և կարևոր նախապայման, որպեսզի անձը կարողանա անկաշկանդ կերպով խոսել իր խնդիրների, հուզական վիճակի և մտահոգությունների մասին: Որոշ բացառիկ դեպքերում հոգեբանը կարող է սահմանափակել գաղտնիությունը՝ պայմանավորված անձի կամ այլ անձանց անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, գաղտնիությունը կարող է սահմանափակվել այն դեպքերում, երբ առկա է անձի կողմից ինքնավնասման կամ ինքնասպանության իրական վտանգ, երբ կա այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող վարքագծի հավանականություն: Այս համատեքստում կարծում ենք, որ անհրաժեշտ է սահմանել տեղեկատվության օգտագործման շրջանակը՝ ապահովելով, որ այն չդառնա ազատազրկված անձանց նկատմամբ լրացուցիչ սահմանափակումներ կիրառելու հիմք, և որպեսզի հոգեբանական ծառայությունները չընկալվեն որպես վերահսկողության կամ պատժողական մեխանիզմ: Այդ նպատակով կարևոր է ապահովել հոգեբանական գաղտնիության հստակ կարգավորում, կիրառել անձանց տեղեկացված համաձայնության սկզբունքը և ձևավորել վստահության մթնոլորտ: Հետևաբար, նշված մտահոգությունը հաղթահարելու, տվյալ չափորոշչով նախատեսված գնահատումը գործնականում արդյունավետ կերպով իրականացնելու և հոգեբանական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարևոր ենք համարում, որպեսզի համապատասխան աշխատանքի մեկնարկից առաջ շահառուին՝ տվյալ դեպքում դատապարտյալին, հոգեբանի կողմից տեղեկացված համաձայնության գրավոր ընթացակարգով տեղեկացվեն բոլոր այն հնարավոր դեպքերի մասին, երբ տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը կարող է սահմանափակվել: Միայն նման պայմաններում ազատազրկված անձինք կարող են առանց վախի և կաշկանդվածության խոսել իրենց խնդիրների մասին՝ վստահ լինելով, որ իրենց կողմից ներկայացված տեղեկատվությունը կօգտագործվի բացառապես մասնագիտական աջակցության նպատակներով, իսկ դրա գաղտնիությունը հնարավորինս կպահպանվի:

4. Պատժի կրման ընթացքում կարգապահական տույժի առկայությունը

Նախ, առաջարկում ենք ավելացնել համապատասխան ծանոթագրություն՝ նշելով, որ սույն կետով նախատեսված միավորները միմյանց չեն գումարվում, և դատապարտյալին կարող է տրվել միայն մեկ ենթակետով նախատեսված միավորը: Սա կարևոր է, որպեսզի գնահատում իրականացնող մասնագետները կարողանան կատարել ճիշտ և միատեսակ գնահատում՝ խուսափելով միավորների կրկնակի հաշվարկից կամ չափորոշչի տարբեր մեկնաբանություններից:

Նաև առաջարկում ենք իրականացնել ներքին ուսումնասիրություններ կոնկրետ դատապարտյալի վարքագծի վերաբերյալ՝ նպատակ ունենալով ավելի խորքային հասկանալ նրա կողմից դրսևորվող կարգապահական խախտումների բնույթը, դրանց առաջացման պատճառներն ու հնարավոր դրդապատճառները: Կարևոր է, որպեսզի պատժի կրման հենց սկզբնական փուլից իրականացվի

[2]«Ազատազրկված անձանց տրամադրվող սոցիալական, հոգեբանական և առողջապահական ծառայությունների բարելավման ուղեցույց», տե՛ս՝ էջեր 44-45, հղում՝ https://prisoninitiatives.am/wp-content/uploads/2022/02/guide_book_neth_compressed.pdf:

[3]«Քաղաքականության համառոտագիր պրոբացիայի կին շահառուների և ազատազրկման դատապարտված կանանց վիճակի բարելավման վերաբերյալ», տե՛ս՝ էջ 8, հղում՝ https://prisoninitiatives.am/wp-content/uploads/2022/02/wfa_women_brief-1.pdf:

համակարգված և նպատակային աշխատանք՝ ուղղված այդ խախտումների կանխարգելմանը: Այս գործընթացում անհրաժեշտ է ներգրավել համապատասխան մասնագիտական խմբերին՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ կամ այլ մասնագետներ, որպեսզի հնարավոր լինի բացահայտել դատապարտյալի վարքագծի հիմքում ընկած սոցիալական, հոգեբանական կամ այլ գործոնները և դրանց հիման վրա մշակել անհատականացված միջամտության մեխանիզմներ: Նման մոտեցումը կարող է նպաստել դատապարտյալի վարքագծային դրական փոփոխությունների ձևավորմանը և իրավահպատակ վարքագծի աստիճանական ամրապնդմանը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև այն դեպքերին, երբ առկա են քրեական ենթամշակույթի կամ հանցավոր միջավայրի ազդեցության նշաններ, օրինակ՝ ներգրավվածություն արգելված իրերի ներթափանցման կամ հնարավոր շրջանառության գործընթացներում: Նման վարքագիծն ինքնին քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի խախտում է և կարող է վկայել դատապարտյալի ոչ իրավահպատակ վարքագծի մասին: Այս համատեքստում անհրաժեշտ է գնահատել այն գործոնները, որոնք կարող են նպաստել նման վարքագծի ձևավորմանը քրեակատարողական հիմնարկի ներսում առկա միջավայրային ազդեցությունների պայմաններում: Հետևաբար նման դեպքերում կարևոր է իրականացնել նպատակային սոցիալական, հոգեբանական և վերականգնողական աշխատանք՝ ուղղված այդ վարքագծի հաղթահարմանը, քրեական ենթամշակույթի ազդեցության նվազեցմանը և իրավահպատակ վարքագծի ձևավորմանը: Այսպիսի համակարգված և շարունակական աշխատանքը կարող է էականորեն նպաստել դատապարտյալի արդյունավետ վերասոցիալականացմանը և պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում նրա հաջող վերաինտեգրմանը հասարակությունում:

5. **Հանցագործությամբ պատճառած վնասը պատժի կրման ընթացքում հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը**

Պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում կարևոր գործոն է դատական ակտով սահմանված ֆինանսական պարտավորությունների առկայությունը: Այդ շրջանակում անհրաժեշտ է դիտարկել պարտավորության տեսակը, օրինակ՝ քաղաքացիական հայց, դատական ծախս կամ այլ ֆինանսական պարտավորություն, ինչպես նաև դրա չափը: Դա կարևոր տեղեկատվություն է դատապարտյալի սոցիալական պատասխանատվության և իր կողմից կատարված հանցանքի հետևանքների նկատմամբ ունեցած վերաբերմունքի գնահատման տեսանկյունից: Սակայն կարևոր է ընդգծել, որ այդպիսի պարտավորությունների առկայությունն ինքնին առանձին վերցրած չի կարող դիտարկվել որպես պայմանական վաղաժամկետ ազատումը բացառող հանգամանք կամ ազատման հնարավորությունը մերժելու մեխանիկական հիմք: Պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի նպատակն առաջին հերթին կապված է դատապարտյալի վերասոցիալականացման, հասարակության մեջ նրա անվտանգ վերաինտեգրման և կրկնահանցագործության ռիսկի նվազեցման հետ: Այդ տեսանկյունից ֆինանսական պարտավորությունների կատարումը պետք է գնահատվի ոչ թե փաստացի մարված լինելու տեսանկյունից, այլև դատապարտյալի կողմից դրսևորվող վերաբերմունքի և նախաձեռնողականության համատեքստում: Կարևոր է պարզել՝ արդյո՞ք դատապարտյալի վարքագիծը վկայում է սոցիալական պատասխանատվության ձևավորման մասին, արդյո՞ք գիտակցում է իր գործողությունների հետևանքով պատճառված վնասը, արդյո՞ք պատրաստակամություն է հայտնում իր հնարավորության սահմաններում կատարել այդ պարտավորությունները, օրինակ՝ նախաձեռնո՞ւմ է պարտավորությունների փուլային կատարում, դիմո՞ւմ է համապատասխան մարմիններին վճարման կարգավորումների համար կամ այլ կերպ արտահայտո՞ւմ է իր պատասխանատվության զգացումը:

Բայց նաև անհրաժեշտ է հաշվի առնել դատապարտյալի սոցիալ-տնտեսական պայմանները և նյութական հնարավորությունները: Շատ դեպքերում դատապարտյալները սահմանափակ ֆինանսական հնարավորություններ ունեն: Ոմանք ազատազրկման ընթացքում չեն ունենում որևէ եկամուտի հնարավորություն, մյուսներն ազատվելուց հետո չեն կարողանում վերականգնվել իրենց նախկին

աշխատանքում կամ նոր աշխատանք գտնել: Այս պայմաններում պարտավորությունների ամբողջական և անհապաղ կատարումը կարող է օբյեկտիվորեն անհնար լինել: Եվ եթե պայմանական վաղաժամկետ ազատման հարցն ուղղակիորեն կապվում է ֆինանսական պարտավորությունների ամբողջական կատարման հետ, ապա կարող է ստեղծվել անհավասար իրավիճակ այն առումով, որ իրավական նույն կարգավիճակն ունեցող դատապարտյալների համար դա կարող է իրավական տարբեր ելքեր ունենալ՝ պայմանավորված նրանց նյութական հնարավորություններով: Այս առումով ավելի հավասարակշռված և արդար մոտեցումն այն է, որ գնահատվի ոչ միայն պարտավորությունների փաստացի կատարման փաստը, այլև դատապարտյալի վարքագիծը, պատասխանատվության զգացումը և ֆինանսական պարտավորությունների կատարման ուղղությամբ ձեռնարկած քայլերը: Նման մոտեցումը թույլ կտա պահպանել պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հիմնական նպատակները՝ խրախուսել դատապարտյալի դրական վարքագիծը և վերասոցիալականացման գործընթացը՝ ապահովելով արդարության սկզբունքը և խուսափելով այնպիսի իրավիճակներից, երբ ազատման հնարավորությունն ուղղակիորեն պայմանավորվում է միայն անձի նյութական կարողություններով:

Նաև առաջարկում ենք ավելացնել համապատասխան ծանոթագրություն՝ նշելով, որ սույն կետով նախատեսված միավորները միմյանց չեն գումարվում, և դատապարտյալին կարող է տրվել միայն մեկ ենթակետով նախատեսված միավորը: Սա կարևոր է, որպեսզի գնահատում իրականացնող մասնագետները կարողանան կատարել ճիշտ և միատեսակ գնահատում՝ խուսափելով միավորների կրկնակի հաշվարկից կամ չափորոշչի տարբեր մեկնաբանություններից:

6. Կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը

Կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի վերաբերմունքը պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում դիտարկում է որպես նրա վերասոցիալականացման աստիճանը գնահատելու կարևոր հանգամանքներից մեկը: Այն կարող է արտահայտվել արարքի հետևանքների գիտակցմամբ, պատճառված վնասի ընկալմամբ, պատասխանատվության զգացումով կամ ապագայում իրավահպատակ վարքագիծ դրսևորելու պատրաստակամությամբ: Միևնույն ժամանակ, կարևոր է, որպեսզի այս հանգամանքը չնույնացվի մեղքի պարտադիր ընդունման հետ: Դատապարտյալի վերաբերմունքի գնահատումը պետք է իրականացվի ավելի լայն համատեքստում՝ հաշվի առնելով նրա վարքագիծը քրեակատարողական հիմնարկում, մասնակցությունը կրթական, սոցիալական կամ վերականգնողական ծրագրերին, կարգապահական խախտումների ինենսիվությունը, ինչպես նաև կրկնահանցագործության ռիսկի գնահատման արդյունքները: Կատարած հանցանքի նկատմամբ վերաբերմունքը պետք է արտահայտվի ոչ միայն բանավոր հայտարարություններով, այլև վարքագծային փոփոխություններով, պատասխանատու վերաբերմունքով և սոցիալական նորմերին համապատասխան գործելակերպով: Հետևաբար այն պետք է դիտարկվի որպես համապարփակ գնահատման գործընթացի բաղադրիչ, սակայն ոչ որպես պայմանական վաղաժամկետ ազատման միակ կամ պարտադիր չափանիշ:

Այս համատեքստում պետք է նշել, որ իր կողմից կատարված հանցանքի նկատմամբ դատապարտյալի վերաբերմունքի ձևավորումը և փոփոխությունը պահանջում է նպատակային վերականգնողական աշխատանք: Այդ գործընթացը չի կարող սահմանափակվել միայն ձևական գնահատմամբ, այլ պետք է ներառի այնպիսի մասնագիտական միջամտություններ, որոնք ուղղված են անձի կողմից իր արարքի հետևանքների գիտակցմանը, պատասխանատվության ընկալմանը և հասարակության մեջ վերաինտեգրմանը: Կարևոր դեր կարող են ունենալ հոգեբանական և սոցիալական աշխատանքները: Անհրաժեշտ է իրականացնել անհատական և խմբային խորհրդատվություն, ինչը կօգնի մտածել իրենց վարքագծի պատճառների շուրջ, գնահատել հանցանքի հետևանքները և զարգացնել կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտությունները: Նման աշխատանքը նպաստում է ինքնաճանաչմանը, հուզական կարգավորմանը և պատասխանատու վարքագծի ձևավորմանը: Կարևոր գործիք կարող է լինել նաև վերականգնողական արդարադատության մեխանիզմների կիրառումը: Այս համատեքստում կարող

է քննարկվել հաշտության ինստիտուտի զարգացումը կամ միջնորդության մեխանիզմների կիրառումը, երբ դա հնարավոր է և համապատասխանում է տուժողի շահերին: Վերականգնողական արդարադատության ծրագրերը կարող են ստեղծել հնարավորություն, որպեսզի դատապարտյալը գիտակցի իր արարքի հետևանքները տուժողի և համայնքի վրա, իսկ որոշ դեպքերում նաև նպաստեն վնասի փոխհատուցմանը կամ բարոյական պատասխանատվության արտահայտմանը: Միաժամանակ կարևոր է, որ նման գործընթացները լինեն կամավոր, մասնագիտական և զգայուն՝ հաշվի առնելով տուժողի իրավունքներն ու անվտանգությունը: Դրանք չպետք է դիտարկվեն որպես պարտադիր նախապայման պայմանական վաղաժամկետ ազատման համար, այլ որպես վերասոցիալականացմանն ուղղված աջակցող մեխանիզմներ, որոնք կարող են նպաստել դատապարտյալի վարքագծային փոփոխություններին և հասարակության մեջ անվտանգ վերադարձին:

7. Որոշակի հակումները և հնարավոր կախվածությունները

Դատապարտյալի որոշակի հակումները և հնարավոր կախվածությունները կարևոր հանգամանքներ են, որոնք կարող են ազդեցություն ունենալ նրա վարքագծի, հանցագործության կատարման պատճառների և կրկնահանցագործության ռիսկի վրա: Այդ պատճառով պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում նպատակահարմար է գնահատել, թե արդյո՞ք անձն ունի այնպիսի հակումներ կամ կախվածություններ, որոնք կարող են խոչընդոտել նրա հաջող վերաինտեգրմանը հասարակության մեջ: Այս չափորոշչով գնահատումը առավել առարկայական դարձնելու նպատակով առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ նկատի է առնվում «հակումներ» ասելով և որ հակումներն են ընդգրկված: Եթե խոսքը վերաբերում է Արդարադատության նախարարի թիվ 279-Ն հրամանով սահմանված շրջանակին, ապա բացասական հակում ունեցող են համարվում այն ազատազրկված անձինք, ովքեր ունեն քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, այլ անձանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու վարքագծային կամ անձնական հակումներ, ինչպես նաև այն դատապարտյալները, ովքեր դրսևորում են հանցածին դիրքորոշումներ: Ազատազրկված անձինք հաշվառման են վերցվում որպես բացասական հակում ունեցող, եթե նրանց շրջանում առկա է փախուստի, ալկոհոլի կամ թմրամիջոցների օգտագործման, ագրեսիվության կամ կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների որևէ հակում: Այս համատեքստում կարծում ենք նաև, որ անհրաժեշտ է հակումներ ունեցող անձանց հետ մասնագիտական աշխատանքը սկսվի պատժի կրման հենց նախնական փուլից՝ համակարգված և ինտենսիվ ձևով: Այս աշխատանքը պետք է ուղղված լինի վարքագծային ռիսկերի կանխարգելմանը, դատապարտյալի մասնագիտական, սոցիալական և հոգեբանական աջակցության ապահովմանը և նրան նախապատրաստել պայմանական վաղաժամկետ ազատմանը և հասարակությանը վերադարձին: Համակարգված միջամտությունների շնորհիվ հնարավոր է ձևավորել դատապարտյալի վարքագծի դրական փոփոխություններ, նվազեցնել ագրեսիվության և կոնֆլիկտայնության ռիսկերը, ինչպես նաև այլ հակումները և աջակցել նրա արդյունավետ վերասոցիալականացմանը:

Կախվածության համատեքստում ենթադրում ենք, որ խոսքը վերաբերում է ալկոհոլի, թմրամիջոցների կամ այլ հոգեակտիվ նյութերի օգտագործմանը, ինչպես նաև խաղային կախվածությանը, որոնք կարող են ազդել անձի սոցիալական վարքագծի վրա: Այս համատեքստում կարևոր է տարբերակել անձին մեղսագրվող քրեորեն հետապնդվող արարքը և նրա հնարավոր կախվածությունները: Այն դեպքերում, երբ անձին մեղսագրվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություն, անհրաժեշտ է տարբերակել, թե տվյալ անձը ներգրավված է միայն շրջանառության գործընթացո՞ւմ, թե՞ նաև հանդիսացել է թմրամիջոցների գործածող: Հնարավոր են իրավիճակներ, երբ անձը ներգրավված է եղել թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ, սակայն ինքը չունի օգտագործման հետ կապված կախվածություն, քանի որ չի հանդիսացել այդ նյութերի օգտագործող: Միևնույն ժամանակ հնարավոր է հակառակ իրավիճակը, երբ անձի մոտ առկա է որևէ կախվածություն, սակայն այն անմիջական առնչություն չունի իր կողմից կատարված քրեորեն հետապնդվող արարքի հետ: Կախվածության փաստը

չպետք է ինքնաբերաբար կապվի կատարված հանցանքի հետ կամ դիտարկվի բացառապես դրա հետևանքով: Կախվածությունները պետք է գնահատվեն ավելի լայն համատեքստում՝ հաշվի առնելով անձի առողջական, հոգեբանական և սոցիալական վիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, թե արդյոք տվյալ կախվածությունը ազդել է կամ կարող է ազդել նրա վարքագծի վրա և հետագա վերասոցիալականացման գործընթացում: Կախվածությունների խնդիրը կարող է նաև ձևավորվել կամ խորանալ հենց ազատազրկման ընթացքում: Այդ առումով անհրաժեշտ է զուգահեռաբար իրականացնել համակարգային և համալիր աշխատանքներ քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի, մասնավորապես ալկոհոլի և թմրամիջոցների ներթափանցման և ապօրինի շրջանառության կանխման ուղղությամբ: Նման միջոցառումները կարևոր են ոչ միայն կարգապահական վերահսկողության տեսանկյունից, այլև այն պատճառով, որ որոշ դեպքերում այն անձինք, որոնք մինչև ազատազրկվելը կախվածություն չեն ունեցել, կարող են ազատազրկման ընթացքում ներքաշվել թմրամիջոցների կամ ալկոհոլի գործածման մեջ, ինչի արդյունքում նրանց մոտ կարող է ձևավորվել կախվածություն: Այս մոտեցումը թույլ է տալիս ապահովել ավելի արդար, օբյեկտիվ և արդյունավետ գնահատում, ինչպես նաև նպաստում է անձի բարեկեցությանը, վարքագծի դրական փոփոխություններին և արդյունավետ վերասոցիալականացմանը:

Հակումների կամ կախվածության առկայությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես պատժի խստացման, կարգապահական պատասխանատվության կամ ազատման հնարավորությունը բացառելու հիմք, այլ որպես այնպիսի գործոններ, որոնք պետք է հաշվի առնվեն վերասոցիալականացման և աջակցության միջոցառումների պլանավորման ժամանակ: Անհրաժեշտ է ներդնել ամբողջ ծավալով առողջապահական, հոգեբանական կամ վերականգնողական ծրագրեր՝ գնահատելով դատապարտյալի մասնակցության և այդ հակումները կամ կախվածությունները հաղթահարելու, բուժելու պատրաստակամությունը: Այս գործընթացում նշանակություն ունի նաև մասնագետների՝ հոգեբանների, սոցիալական աշխատողների և բժշկական անձնակազմի բավարար մասնագիտական պատրաստվածությունը և նրանց կողմից տրված մասնագիտական գնահատականը: Անհրաժեշտ է, մի կողմից, ապահովել մասնագիտական գնահատում և համապատասխան բուժական կամ վերականգնողական աջակցություն, իսկ մյուս կողմից՝ ուժեղացնել քրեակատարողական հիմնարկներում վերահսկողության և կանխարգելման մեխանիզմները՝ արգելված նյութերի ներթափանցման և շրջանառության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու նպատակով: Այսպիսի համակցված մոտեցումը կարող է նպաստել ինչպես դատապարտյալների առողջության պահպանմանը, այնպես էլ նրանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետությանը: Նաև անհրաժեշտ է ձևավորել միջմասնագիտական աշխատանքային մեթոդ, որը հիմնված կլինի սերտ համագործակցության վրա քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմի հետ: Այս մեթոդի շրջանակում առաջնային նպատակներն են բարելավել մեթադոնային փոխարինող բուժման որակը և ապահովել դրա համաչափ հասանելիությունը բոլոր քրեակատարողական հիմնարկներում, ներդնել համակարգված և համալիր վնասի նվազեցման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն վարքագծային ռիսկերի, առողջական խնդիրների և վարքագծային գործոնների կառավարմանը, իրականացնել կախվածությունների հաղթահարման և բուժման ծրագրեր, որոնք ներառեն հոգեբանական, սոցիալական և առողջապահական աջակցություն, ինչպես նաև անձի վարքագծային և սոցիալական ինտեգրման նպատակային միջամտություններ: Միջմասնագիտական մոտեցումը թույլ կտա ապահովել ծրագրերի շարունակականություն, բարձրացնել մասնագիտական աշխատանքի արդյունավետությունը, ստեղծել վստահության մթնոլորտ դատապարտյալների շրջանում և, վերջապես, նպաստել նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը և հասարակությանը հաջող վերադարձին:

8. Քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը

Քրեական ենթամշակույթի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը կարևոր հանգամանք է, որը կարող է բնութագրել նրա արժեքային կողմնորոշումները, սոցիալական ու վարքագծային

մոտեցումները և քրեական միջավայրի նկատմամբ ունեցած դիրքորոշումը: Այս դիրքորոշումը կարող է արտահայտվել ինչպես խոսքային մակարդակով, այնպես էլ դատապարտյալի վարքագծով, շփումների շրջանակով և քրեակատարողական հիմնարկում ձևավորված հարաբերություններով: Այսինքն՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ քրեական ենթամշակույթի նկատմամբ վերաբերմունքը միշտ չէ, որ կարող է արտահայտվել բացահայտ ձևով հատկապես այնպիսի փակ միջավայրում, ինչպիսին քրեակատարողական հիմնարկն է: Հետևաբար նպատակահարմար է գնահատել ոչ այնքան բանավոր հայտարարությունները, որքան դատապարտյալի փաստացի վարքագիծը, նրա ներգրավվածությունը կրթական, սոցիալական կամ վերականգնողական ծրագրերում, ինչպես նաև հարաբերությունները այլ դատապարտյալների և հիմնարկի անձնակազմի հետ: Միաժամանակ պետք է նկատի առնել, որ քրեական ենթամշակույթի նկատմամբ դրական վերաբերմունքը կարող է արտահայտվել ոչ կանոնադրական կանոնների ընդունմամբ, հիերարխիկ հարաբերությունների պահպանմամբ, քրեական հեղինակությունների ճանաչմամբ կամ այդպիսի արժեքների տարածմամբ: Այս համատեքստում կարևոր է գնահատել դատապարտյալի արժեքային համակարգը, օրինակ, նա լոյալությո՞ւն է ցուցաբերում նմանատիպ երևույթներին, ձևականորեն իրեն հեռացնում է նմանատիպ միջավայրից սոցիալական ընդունելի վարքագիծ դրսևորելու և պայմանական վաղաժամկետ ազատման ժամանակ իր համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակո՞վ, թե՞ ներքուստ չի հարում այդ միջավայրին: Անձը որոշ դեպքերում կարող է ձևականորեն բացասական վերաբերմունք ցուցաբերել և մասնակցել վերասոցիալականացման միջոցառումներին՝ պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում իր համար նպաստավոր նախադրյալներ ստեղծելու նպատակով: Նման իրավիճակներում արտաքին դրսևորումները միշտ չէ, որ լիարժեք ձևով արտացոլում են դատապարտյալի իրական արժեքային դիրքորոշումները կամ վարքագծային փոփոխությունները: Կարևոր է, որ գնահատումը հիմնված լինի ոչ միայն դատապարտյալի հայտարարությունների կամ ծրագրերին մասնակցության փաստի վրա, այլև նրա երկարաժամկետ վարքագծի, հարաբերությունների բնույթի և այլ դատապարտյալների հետ ունեցած կապերի գնահատման վրա: Միայն ձևական մասնակցությունը ծրագրերին չի կարող բավարար հիմք լինել եզրակացության համար, որ դատապարտյալը իրականում հեռացել է քրեական ենթամշակույթի արժեքներից և պատրաստ է հասարակության մեջ օրինապահ վարքագծով վերաինտեգրվել: Ավելացնենք, որ պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացը սկսվում է դատապարտյալի դիմումի հիման վրա: Ըստ քրեական ենթամշակույթի չգրված կանոնների՝ դիմում գրելը կամ փաստաթուղթ ստորագրելը ընդունված պրակտիկաներ չեն: Ընդունված պրակտիկա է այն, երբ ենթամշակույթ կրող անձինք պայմանական վաղաժամկետ ազատման համար դիմում չեն գրում, քանի որ հետաքրքրված չեն պետության կողմից առաջարկվող գործընթացներով, այդ թվում՝ պայմանական վաղաժամկետ ազատմամբ: Արդյունավետ կլինի, եթե ներկայացվի հստակ վիճակագրություն, թե երբ է լրանում դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատման ժամկետը, նրանցից քանիսն են ներկայացնում դիմում, և քանիսն՝ ոչ: Նման վիճակագրությունը կօգնի ավելի հստակ պատկերացում կազմել գործընթացի իրողական մասնակցության մասին և պարզել, թե որքանով են դատապարտյալները ներգրավված կամ հետաքրքրված պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացով:

Միևնույն ժամանակ կարևոր է ուշադրություն դարձնել գնահատում իրականացնող մասնագետներին: Գործնականում կարող են առաջանալ իրավիճակներ, երբ մասնագետները չեն ունենա բավարար ռեսուրսներ կամ ինստիտուցիոնալ պաշտպանություն՝ լիովին անկախ գնահատում իրականացնելու համար: Հնարավոր են ճնշումներ, սպառնալիքներ կամ վախի մթնոլորտ՝ ուղղված ինչպես մասնագետների, այնպես էլ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ, ինչը կարող է խոչընդոտել օբյեկտիվ և անկողմնակալ գնահատմանը: Բացի այդ, նման գործընթացներում չի կարելի անտեսել նաև կոռուպցիոն ռիսկերը, որոնք կարող են բացասաբար ազդել գնահատման և որոշումների կայացման վրա: Մեկ այլ խնդիր է այն, որ մասնագետները կարող են այս կամ այն կերպ հարել քրեական ենթամշակույթին, հարգանք տածել այդպիսի մարդկանց նկատմամբ, այսինքն՝ դատապարտյալների հետ գտնվել նույն «արժեքային» դաշտում: Այդ պատճառով կարևոր է ապահովել մասնագետների պաշտպանության

արդյունավետ համակարգ և նրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ, որոնք կնպաստեն գնահատման գործընթացի թափանցիկությանը, մասնագիտական անկախությանը և օբյեկտիվությանը: Այսպիսի մոտեցումը կարող է նվազեցնել ձևական գնահատումների, քրեական ենթամշակույթի ազդեցության և կոռուպցիոն ռիսկերի հնարավորությունը՝ ապահովելով, որ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումները հիմնվեն դատապարտյալի իրական վարքագծային փոփոխությունների և վերասոցիալականացման փաստացի առաջընթացի վրա:

Ավելացնենք նաև, որ 2020 թվականի հունվարի 22-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագիծը, որով սահմանվել է քրեական պատասխանատվություն այն գործողությունների համար, որոնք առնչվում են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, ինչպես նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու հետ: Նշված չափորոշչով գնահատման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոն: Նախ, դատապարտյալները կարող են գրավոր ձևով ցուցաբերել բացասական վերաբերմունք քրեական ենթամշակույթի նկատմամբ՝ փորձելով խուսափել քրեական պատասխանատվությունից, մինչդեռ գործնականում շարունակել «իրագործել» իրենց դրական վերաբերմունքը այդ միջավայրում: Երկրորդ, մասնագիտական ուշադրության կենտրոնում պետք է լինեն հատկապես այն անձինք, ովքեր դատապարտվել են նշված հոդվածների շրջանակներում, որպեսզի կանխվի նրանց կողմից քրեական ենթամշակույթի տարածումը քրեակատարողական հիմնարկի ներսում: Միաժամանակ կարևոր է, որ այդ անձինք աստիճանաբար ներառվեն վերասոցիալականացման գործընթացում, որի նպատակն է խթանել իրենց հեռացումը քրեական միջավայրից և նպաստել հասարակությունում օրինապահ վարքագծով վերաինտեգրմանը:

9. Ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը

Դատապարտյալի ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ պահպանվող կապը պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում գնահատման կարևոր չափանիշներից մեկն է: Այն օգնում է դատապարտյալին աստիճանաբար նախապատրաստվել ազատությանը և հասարակություն վերադարձին, մեղմել երկարատև մեկուսացման հոգեբանական հետևանքները, նաև թույլ է տալիս գնահատել դատապարտյալի սոցիալական աջակցության ցանցի առկայությունը, հասարակության մեջ վերաինտեգրվելու պատրաստակամությունը և ազատությունից հետո կրկնահանցագործության հնարավոր ռիսկերը: Սոցիալական շփման հիմնական շրջանակները՝ ընտանիքը, բարեկամները և վստահելի ընկերները, կարող են դրական ազդեցություն ունենալ՝ աջակցելով հույզերի կարգավորմանը և նպաստելով վարքագծային դրական փոփոխություններին: Արտաքին աշխարհի հետ կապը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել դատապարտյալի սոցիալական միջավայրի մասին և մշակել ավելի հասցեական աջակցության ծրագրեր: Սակայն արտաքին աշխարհի հետ կապերը պետք է պահել դինամիկ վերահսկողության ներքո՝ դրանք դիտարկելով երկու տեսանկյունից: Նախ, անհրաժեշտ է պարբերաբար բացատրական աշխատանքներ կատարել՝ կանխելու համար այն իրավիճակները, երբ դատապարտյալը կարող է կապի միջոց հանդիսացող անձանց՝ մասնավորապես կանանց, ծնողներին կամ երեխաներին, ներգրավել հակահիրավական գործողությունների մեջ՝ նրանց դրդելով քրեակատարողական հիմնարկ ներս բերել արգելված իրեր կամ նրանց շրջանում տարածել քրեական ենթամշակույթի գաղափարներն ու վարքականոնները: Մյուս կողմից, անհրաժեշտ է իրականացնել համապատասխան բացատրական աշխատանքներ՝ կանխելու համար այն դեպքերը, երբ կապի միջոց հանդիսացող անձինք սեփական նախաձեռնությամբ կարող են փորձել դատապարտյալին փոխանցել արգելված իրեր կամ իրենց ունեցած կապերի և ազդեցության

միջոցով բացասաբար ազդել դատապարտյալի վարքագծի և վերասոցիալականացման գործընթացի վրա քրեակատարողական հիմնարկի ներսում, օրինակ՝ նրան ներքաշելով քրեական ենթամշակույթի ազդեցության դաշտ:

Պետք է նկատի առնել, որ եթե դատապարտյալի կապն արտաքին աշխարհի հետ թույլ է, ազատվելուց հետո նրա վերաինտեգրման արդյունավետությունը կարող է լրջորեն վտանգվել, քանի որ սոցիալական աջակցող կապերի բացակայությունը կարող է առաջացնել մեկուսացվածություն և դժվարություններ սոցիալական ու իրավական նորմերին համապատասխան վարքագիծ հաստատելու հարցում, ինչի արդյունքում կարող է բարձրանալ կրկնահանցագործության ռիսկը: Ուստի պատժի կրման ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել կանոնավոր և համակարգված միջոցառումներ՝ արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապը պահպանելու և ամրապնդելու նպատակով: Սոցիալական աշխատողների, հոգեբանների և այլ մասնագետների մասնակցությամբ պլանավորելով միջամտություններ՝ հնարավոր է գնահատել, աջակցել և վերահսկել դատապարտյալի շփումները արտաքին աշխարհի հետ և պաշտպանել նրան բացասական ազդեցություններից: Կարևոր է նաև գնահատել խոցելիությունը, օրինակ, քրեական ենթամշակույթի ազդեցության կամ կախվածությունների ռիսկի առկայությունը, և անհրաժեշտության դեպքում իրականացնել համապատասխան ուղղորդումներ և միջամտություններ: Կարևոր է խթանել ընտանիքի հետ առողջ և կառուցողական հարաբերությունները, դատապարտյալներին ներգրավել կրթական, աշխատանքային և վերականգնողական ծրագրերում, որոնք զարգացնում են սոցիալական հմտություններ և ստեղծում կապեր հասարակության հետ: Այսպիսի համակարգված մոտեցումը նպաստում է ոչ միայն դատապարտյալի վերասոցիալականացման արդյունավետությանը, այլև նվազեցնում է կրկնահանցագործության ռիսկը, ապահովելով նրա կայուն և անվտանգ վերաինտեգրումը հասարակությունում:

Ավելացնենք, որ 2022 թվականի հուլիսի 22-ին ուժի մեջ մտած Քրեակատարողական օրենսգրքով նախատեսվել են մի շարք կարգավորումներ, որոնք ուղղված են ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանման և ամրապնդմանն: Սակայն Կազմակերպության կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թեև օրենսդրական մակարդակում լայն հնարավորություններ են սահմանված, գործնականում շատ դատապարտյալներ չեն օգտվում դրանցից[4]: Հետևաբար առաջարկվել է, որպեսզի Արդարադատության նախարարությունն ու Քրեակատարողական ծառայությունը ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր այդ կարգավորումները կյանքի կոչելու նպատակով: Գործնական կիրառության խոչընդոտների պարզումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ պայմանական վաղաժամկետ ազատման նոր հայեցակարգում արտաքին աշխարհի և ընտանիքի հետ կապի պահպանությունը գնահատվում է առանձին չափորոշչով:

[4]«Տեղեկանք 2024 թվականին քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովման վերաբերյալ», հղում՝ https://prisoninitiatives.am/wp-content/uploads/2022/02/kap_2024.pdf: